լճյլուխը թալու։ Փուշն ընգնում ա Մնյսադի դըլխին։

Մայմայր ձեռը տանում ա արի ջեբը, լճյլուխը խանում ա, ինչ որ աղոթք ա անում ու ձեռի լայլուխը թալում ա։ Մնյսադի ձեռի կեղտոտ լայլուխը ընկնում ա գետին, ըսկի ոնչ ան բան էլ չընում։

Ուշերեկը գալում ա Քրիստոսին։ Որ ուշերեդը գալում ա Քրիստոսին՝ ջեբից խանում ա սիվտակ լայլուխը, կանչում ա հիրան ասուն ու ասում ա.

—Խաղն ու դինին—տեր կենթանին, աստված ջան, թե քո տղեն եմ, էսա իմ լճյլուխը դառնա մե խաստ սիվտակ կատու։ Աստված ջան, դու ընձի սևերես չանես էս անօրու հառեչը։

Էս ասում ա ու լճյլուխը թալում։ Լճյլուխը հմենի հաշկի հառեչը սպտտվում ա, սպտտվում, դառնում մե խաա սիվտակ կատու, մռալով գալում, փաթթվում Քրիստոսի ոտներին։

Ըտու խամար էլ, էտ օրվանից կաղվին տիեզը հաշվում են ամենամեխկ բանը, չումքի կատուն հառեչ հելեր ա Քրիստոսի ձեռի լճյլուխը։

# ԵՐԳԵՐ

## 1. ՉԱՐՉԻ ՀԱՐԹՆՆԻ ՍԱՏՈՒՐԸ

Քյավառում ապրում էր մի մանրավաճառ, որը փողոցները շրջելով, բարձր ձայնով իրրև երգ-ռատնավոր կանչում էր.

Հերեան,
Թիվլիզ,
Բաքու,
Բաթում,
Ռոստով,
Վարշավ,
Լոձ,
Լվով,
Մոսկով,
Մայրաքաղաք Պետերբուրգ։
Ասեղ,
Ասխաման։
Ռանգ-ռանգ կոճի թելեր.
Ան կոճի թել,
Աիվտակ կոճի թել,
Մարաղովի չուլքու թել,
Շաքըրի թել,
Պըյած թել,
Կ'այթան,
Արռշումե թել։
Մաղնոց,
Մախաթ,
Ջալոռասա,
Ջուլքու շղեր։
Սանդր,
Շանչաղ,
Կնուպկա,
Քորոց,
Կոճակ։
Մոչան,
Ուլինդ,
Մաղնիք։
Ալըորավ վաքոչ
Բրասլեթ,
Գինդ,
Խինա,
Աուրմա,
Բոժոժ,
Հաշա։
Ահմթի ցեպ,
Բուլավկա,
Պոլի,
Քիշիլա,
Բոդի յաղմա,
Թղբեխ։
Հաշկի դեղ,
Հաշկի դեղդիր,
Դուխի։
Վլասկի սապոն,
Լողակ,
Ջանդուլակ,
Դուխու սապոն,
Բոգլը սապոն,
Արաղի սապոն։
Տեղրակ,
Մատիտ,
Կ'ալամ,
Կ'ալամդան,
Հրուշկ,
Գրեֆիլ,
Ածողական,
Դույնավոր մատտներ,
Ջնչիկ,
Քանոն,
Քերեկան։
Լավճին իբեշկա,
Քուռկով իրիշկա,
Կ'աֆ։
Պապիրոզի թուղտ, «Անանովի»,
Պապիրոզի թուղթ Կնիժկով,



6—358

Պաշկով թութում,
Բաց թութում,
Սաչտխ թութում,
Կ՚ույլասար,
Կոըխ թութում,
Պապիլոզ «Խան-կեֆի»,
Պապիլոզ «Ափիցերսկի»,
Պապիլոզ «Մարս-սեյլանով»,
Պապիլոզ «Սուդերնի»,
Պապիլոզ «Բոզարչյանց»,
Պապիլոզ «Ջայկա»,
Մուշտուկ,
Ջրուխ,
Բուռնութի։
Ս. Կարապեաի ժամոն,
Կյառթե ժամոն,
Ջարչու ժամոն,
Դանամասաակի։
Խումդ,
Մոմ,
Կնդրուկ,
Սխաոր,
Գխաոր,
Մխակ,
Դարչին,
Պորինջան,
Կոլնջան։
Դեղին կոճ,
Սիվաակ կոճ,
Ջանջաֆիլ,
Կլոր բիրար,
Սև րիրար,
Կուրդութի*,
Լիմոնաուզի,
Սիվաակ շիր,
Կապուտ շիբ։
Ջորցուկ չիլավ,
Ամսականի սերմ,
Բազկի սերմ,
Բոխկի սերմ,
Գյազարի սերմ,
Գնձի սերմ,
Ծեթրոնի սերմ,
Կոդմուկի սերմ,
Հոեյանի սերմ,
Շազդամի սերմ,
Սոխի սերմ,
Տեր-ադոթիկի սերմ,
Քյավնոռ սերմ,
Թարխունի շիթիլ,

* Ծխախոտի նման բույս է, շատ դառը, գործածում են ստամոքսային հիվանդությունների ժամանակ (ծ. կ.)։

Կանֆեռթ,
Նաբաթ,
Սուրյաթ,
Նոզուլ, որը ըլսա՝ ընդու հանդաճր խուլ։
Այս խոսքերն ասավ Նովո-Բայազետի հադնի վաճառական ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱԲԱՂՅԱՆԸ։

## 2. Օ՜Յ, Օ՜Յ, Օ՜Յ, Օ՜Յ

Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ,
Հովն անուշ,
Հովն անուշ,
Մաճկալ պառկել,
Քունն անուշ։
Քունն անուշ։
Հովն անուշ, հովն անուշ, հովն անուշ,
Քունն անուշ, քունն անուշ, քունն անուշ։
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ,
Հովն անուշ, հովն անուշ,
Էսօր դութանը մերն է, հովն անուշ,
Գութնի մաճկալ իմ հերն է, քունն անուշ։
Հովն անուշ, հովն անուշ, հովն անուշ,
Քունն անուշ, քունն անուշ, քունն անուշ։

## 3. ԿԱՄԱՑ ՔՇԵՔ ՍԵԼԵՐԸ

Կամաց քշեք սելերը,
Կապեմ չորրիս թելերը,
Բաց խուրջինը, առր դանակը,
Խնձոր կիսեմ, տամ յարիս։
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ։
Էսօր դութանը մերն ա,
Գութնի մաճկալն իմ յարն ա,
Բաց խուրջինը, առր դանակը,
Խնձոր կիսեմ, ասմ յարիս։
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ։

## 4. ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԻԿ ՍԻՐՈՒՆԻԿ

Կարմիր վարդիկ սիրունիկ,
Իրիկունը հանդարտ մով.
Քո կուրծքը բաց, անուշ յար,
Ցողն իջնի կրծքիս քով։
Լերե, լե, լե լերե, լե,
Լերե, լե, լե լերե, լե։

## 5. ԵՐԲ ԿԲԱՑՎԻ ...

Ախ, ասավ.
Երբ կբացվի լուսն ու բարին,
Սոնեմ դառները, ելնեմ սարին,
Ավետիք տամ, սիրած յարին,
Պատմեմ երազս, երազս։
Ախ, ասավ.
Երազումս տեսա կուսին,
Նրա որդի սուրբ Հիսուսին,
Խաչն էր դրված Նրա հուսին,
Պատմեմ երազս, երազս։

## 6. ՆՐԹԱՆՔ ՍԱՐԸ ՎԱՂԵՎԱՂ

Նրթանք սարը վաղեվաղ,
Քամին չափ տա նոտղենաղ,
Նուշան բաղենք, Նուշան ջան,
Լո, լո, լո, լո, լո, լո ջան։
    Արե, շողեր էլ չկան,
    Թոշուն, թիթեռ բուն մտան,
    Վազենք, նրթանք դեպի տուն,
    Լո, լո, լո, լո, լո, լո ջան։

## 7. ՀՈՌՈՄ, ՀՈՌՈՄ...

Հոռոմ, Հոռոմ, Հոռոմել է յարս,
Վարդը ձեռին թոռոմել է յարս,
Վարդը ձեռին թոռոմել է յարս։
    Աղջի Հոռոմ, բաղդադին կապել ես,
    Նշանվել ես, շեկ տղին խտփել ես,
    Նշանվել ես, շեկ տղին խափել ես։

## 8. ԶՈՐԱՆ, ՏԱՎԱՐԴ ՔՇԻՐ

Զորան, տավարդ քշիր, նեննիմ, ամտն, աման,
Նեննիմ աման, աման, սարի դյալին։
Ես քեզի վրա սեր ունեմ, Հոպ մերա մեռնի,
Սարի դյալին աման, սարի դյալին աման, Սաթո
                                        յարին։

Գնացի տրտր, հաց տարա, նեննիմ ամտն, աման,
Նեննիմ աման, աման, սարի դյալին։

Յարիս տեսա եա ղառա, հոպ մերդ մեռնի,
Սարի դյալին աման, սարի դյալին աման, Սաթո
                                        յարին։

## 9. ԵՐԵՎԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՐԵԼ

Երեվան բաղ եմ արել, յարս, յարս, յարս, յարս,
Ջիղյարս դաղ եմ արել, անուշ յարս։
Դոստ ու ղուշմանի միջին, յարս, յարս, յարս,
                                        յարս,
Լացս ծիծաղ եմ արել, անուշ յարս։

Դու ես իմ միակ սերը, յարս, յարս, յարս,
Քառանար չկամ մերը, անուշ, յարս։
Էդպես է որ ասում ես, յարս, յարս, յարս, յարս.
Ի՞նչ անեմ տղետ մորս, անուշ յարս։

## 10. ԵՍ ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՅԻ

Ես սարեն կուգայի, դուն դուռը բացիր,
Ջեռա տարար ծոցտ, ախ քաշիր լացիր,
Աղե ջան, աղե, դարդերս շատ է։
    Ես մի պինդ պաղ էի, դու մումուռ լացիր,
    Քո հրեղեն արցունքով ինձի հալեցիր,
    Մայրիկ ջան, Քուռն ընկնեմ,
    Քույրիկ ջան, կուրանամ շեկ յարի դարդից։
Ես մի չո՜ր ծառ էի, դու դարնան արե,
Քո սերով ծաղկեցավ իմ ճուղն ու տերե,
Աղե ջան, աղե, դարդերս շատ է։
    Թե ինձ չէիր սիրում, ինչո՞ւ ասացիր
    Մի բուռ կրակ եղար, ինձի վառեցիր։
    Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,
    Քույրիկ ջան, կուրանամ շեկ յարի դարդիցը։

## 11. ՈՏՏ ԴԻՐ ՔԱՐԻՆ...

Ոտտ դիր քարին,
Ոտտ դիր քարին,
Առ սիրած յարին,
Շխրկաան աղջիկ,
Դխկրտան աղջիկ,
Քո դեյրեն կարճ ա,
Էն լոթու խարջ ա։
    Բոբիկ մի քելա, փուշ ա,
    Շխկրտան աղջիկ,
    Դխկրաան աղջիկ,
    Քո դեյրեն կարճ ա,
    Սև տղի խարջ ա։

## 12. ԽՈՐՈՏ ԷՐ ՄԱՅԼԻ ՏՂԵՆ...

Տնգող, անգող ման արի,
Հիրդներր առն արի.
Խորոտ էր մայլի տղեն,
Կոլոա էր մայլի աղեն։
Տնգոդ, տնգող ման արի,
Դարաակ ջերով առն արի։
Խորոա էր մայլի աղեն,
Կոլոտ էր մայլի աղեն։

## 13. ՄԱՐԱԼ, ՄԱՐԱԼ...

Մարալ, մարալ, ման ես գալում մայլեքը,
Վախենում եմ, դյուլով ղանեն դյադեքը։
Ախչի Թելի, դուրս մի հելի, կսենաս,
Բոյտ կարճ ա, լոթու խարջ ա, կսենաս։

## 14. ԱՐԵՎՆ ԵԼԱՎ ԿԱՄԱՐ-ԿԱՄԱՐ

Արևն ելավ կամար-կամար,
Զուլոն կապեց ոսկե քամար,
Ես կմեռնեմ քեզի համար,
Հավար Զուլո, մադաթ Զուլո, Զուլո, Զուլո,
                                Զուլո, Զուլո ջան։
    Դու ղաշտ կուգաս հուլա, հուլա,
    Կնմանիս բամրկի քուլա,
    Աչքս տեսավ, սիրտս կուլա,
Հավար Զուլո, մադաթ Զուլո, Զուլո, Զուլո,
                                Զուլո, Զուլո ջան։
Դու կայնել ես առվան ափին,
Փեշքտ կուաա արեգակին,
Կարմիր երես արյուն-կաթան,

Հավար Ջուլո, մագաթ Ջուլո, Ջուլո, Ջուլո,
Ջուլո, Ջուլո ջան։
Ջուրը կերթաս ջուխտ ղորակով,
Աիրտս կէրես բոց կրակով,
Քեզ կփախցնեմ ալ քուռակով,
Հավար Ջուլո, մտգաթ Ջուլո, Ջուլո, Ջուլո,
Ջուլո, Ջուլո ջան։

## 15. ԱՅ ՍԻՐՈՒՆ ԿԱՔԱՎ

Այ սիրուն կաքավ,
Բռնենք պարր բոլորի,
Պարի միջին,
Դու էն տղին մոլորի։
Քաղկեն աարան լապտերր,
Զարկին գյուղի ղանգերը։
Այ սիրուն կաքավ,
Գնանք սարը սիրեխի,
Սարի ճամփին,
Դու սիրածիդ մոլորի։
Քաղկեն աարան լապաերր,
Զարկին գյուղի ղանգերը։
Այ սիրուն կաքավ,
Էրթանք կալի բոլորր,
Կալի միջին,
Դու էն տղին մոլորի։
Քաղկեն աարան լապաերր,
Զարկին գյուղի ղանգերը։
Այ սիրուն կաքավ,
Բռնենք պարր բոլորի...

## 16. ԲԱՏՈԼԱ ՋԱՆ, ԲԱՏՈԼԱ

Բաառլա ջան, բաառլա,
Սաքտր ու շարբաթ-օլա։
Ո՞ւր գնացիր, ո՞ւր եկար,
Բաառլա ջան, բաառլա։
Դու իմ սրտին ղուր եկար,
Շաքար ու շարբաթ-օլա։
Էգպես ա, որ ասում ես,
Բաառլա ջան, բաառլա։
Ես քո սիրած յարն եմ,
Շաքար ու շարբաթ-օլա։
Այ ասին՝ հա ասին՝ հա,
Բատոլա ջան, բաառլա։
Կտրմիր գինին թասին ա,
Շաքար ու շարբաթ-օլա։
Լցնեմ տամ, յարիս խմե,
Բատոլա ջան, բատոլա։
Հեա ղառնա, ինձի պագնա,
Շաքար ու ջարբաթ-օլա։
Ախպեր ունեմ ձիավոր,
Բաառլա ջան, բաառլա,
Զինվորութլան ա սովոր,
Շաքար ու շարբաթ-օլա։

## 17. ՕՍԱՆԱ, ԵՐԻ, ԵՐԻ ՕՍԱՆԱ

Օսանա, երի, երի Օսանա,
Օսանա, կանֆետն Օսանի բանն ա։
Օսանա, բուսել ա բաղի միջին,
Օսանա, շամամր թաղի միջին։
Օսանա, երի, երի, Օսանա,
Օսանա, կանֆետն Օսանի բանն ա։
Օսանա, գնա արի, ման արի,
Օսանա, յտրիտ գտիր, տուն արի,
Օսանա, երի, երի, Օսանա,
Օսանա, չամիչը Օսանի բանն ա։
Օսանա, արի գնանք մեր բաղը,
Օսանա, բռնենք մեր սիրած խաղը։
Օսանա, գոն ուլիկ ա, ուլիկ ա,
Օսանա, սալգտթ յարը ժովիկ ա։

## 18. ՀԵԼԱ ՀԵՐԹԻՍ ՏՓԻ, ՏՓԻ

Հելա հերթիս տփի. ափի,
Ջան իման, ջան իման,
Ցարս տուն չէր, նստա լացի.
Ջան իման, ջան իման,
Չինար բոյիտ ես մտտաղ։
Մեր տուն ձեր տուն իրար գիմաց.
Ջան իման, ջան իման,
Աչքով կանեմ ես քեզ իմաց,
Ջան իման, ջան իման,
Չինար բոյիտ ես մատաղ։
Մեր տուն ձեր աուն իրար մոտիկ,
Ջան իման, ջան իման,
Երթանք, քաղենք հորթուկին խոաիկ,
Ջան իման, ջան իման,
Չինար բոյիա ես մաաաղ։

## 19. ՀՈՎ, ՀՈՎ, ՀՈՎ ԵՂՆԻ

Հով, հով, հով եղնի,
Ցարս քամարով եղնի,
Հով, հով, հով եղնի,
Ցարիս առմր ծով եղնի։
Դե թոեք, թոեք, թողր հանեք,
Մեր ղուշմանի հաչկր հանեք,
Դե ղանեք, ղանեք, թողր հանեք,
Մեր թշնամու հաչկր հանեք։

## 20. ԱԼԱԳՅՈԶԼՈՒ ՆԱԶԼՈՒ ԴԻԼԲԱՐ

Ալագյոզլու նազլու գիլբար,
Ես քո բերող մորր մաաաղ։
Ալագյոզլու նազլու գիլբար,
Ես քո կամար ունքին մաաաղ։
Ալագյոզլու նազլու գիլբար,
Ես քո ծամ ու հյուսին մատաղ։
Ալագյոզլու նազլու գիլբար,

Ես քո բոյ ու բուսին մատաղ։
Ալագյոզլու Նազլու դիլրար,
Ես քո քիթ ու բերնին մատաղ։
Ալագյոզլու Նազլու դիլրար,
Ես քո բարակ մեջքին մատաղ։
Ալագյոզլու Նազլու դիլրար,
Ես քո մարմար ջանին մատաղ։
Ալագյոզլու Նազլու դիլրար,
Ո՞ւր գնացիր դու, ո՞ւր եկար։
Ալագյոզլու Նազլու դիլրար,
Դու իմ սրտին ջատ դուր եկար։
(Երգում է Ալագյոզլու Նազլու դիլրար ողջ խումբը)։
Քեզ կգովենք մեզի համար։

## 21. ՏԱՆՈՒՄ ԵՆ, ԱԴԵ ՋԱՆ, ՏԱՆՈՒՄ ԵՆ

Տանում են, աղե ջան, տանում են։
Տանում են, քեզանից հանում են։
Սպիտակ ձին նալն ի՞նչ կանի,
Վո՜ւյ, աման, աղե ջան, տանում են,
Սիրունը խաղն ի՞նչ կանի,
Տանում են, քեզանից հանում են։
Տանում են, աղե ջան, տանում են,
Տանում են, քեզանից հանում են։
Սև է չորսանի շունը,
Վո՜ւյ աման, աղե ջան, տանում են,
Չի տանում յարիս քունը,
Տանում են, քեզանից հանում են։
Տանում են, աղե ջան, տանում են,
Տանում են, քեզանից հանում են։
Բա չեք ասի, սերն ի՞նչ ա,
Վո՜ւյ աման, աղե ջան, տանում են,
Սերն աստծու կրակ ա,
Տանում են, քեզանից հանում են։
Տանում են, աղե ջան, տանում են,
Տանում են, քեզանից հանում են։
Դարախանի ուլիցը,
Վո՜ւյ, աման, աղե ջան, տանում են,
Հայկուշին տարան պոլիցեն,
Աման հե՜յ, աղե ջան, տանում են։
Տանում են, աղե ջան, տանում են,
Տանում են, քեզանից հանում են։
Թող տանեն, բալա ջան, թող տանեն,
Քեզ ինձանից թող հանեն,
Վո՜ւյ աման, բալա ջան, թող տանեն,
Մեզ իրարից բաժանեն։

## 22. ԼԱՋԳԻՆ ԵԿԱՎ...

Լաղգին եկավ Լաղգստանա,
մայրիկ ջան,
Մարջան բերեց Դաղստանա,
մայրիկ ջան,
Փարեն բերեց Լաղգստանա,
մայրիկ ջան։
Լաղզուն տարան Գորոյի թավլեն,
մայրիկ ջան,
Գլոխ ղանին ձձմի բերան,
մայրիկ ջան,
Ջանդակն արին կ'ալի կերան,
մայրիկ ջան...

## 23. ԱՅ ԼՈԹԻ ՄԱՐԱՆ...

Այ լոթի Մարան, ջան լոթի Մարան,
Ումուդա մեռնի, քեզի դո՞ր տարան։
Մանեթը խուրդի, արի արասի,
Էն տղեն կառնեմ, անուն Աղասի։

Այ լոթի Մարան, ջան լոթի Մարան,
Արևս խորեմ, ինձնից շուտ տարան։
Դու քո յարին առ, ես իմ յարն առնեմ,
Թե որ խանդարեմ, բեմուրադ մեռնեմ։

Այ լոթի Մարան, ջան լոթի Մարան,
Արի մեր բաղը, քո յարին տարան։
Աղասուս չասես, թե քեզի կառնեմ,
Բեմուրադ չանես, գլուխս թաղեմ։

## 24. ԱՂՃԻ, ԱՂՃԻ...

Աղճի, աղճի, սևավոր աղճի,
Արի քեզ տամ խոջի տղին.
Խոջի աղեն քեզ կպահա.
Կհագցնա, կխմցնա, կկերցնա։
Մարե, մարե, անուշ մարե,
Ես ի՞նչ կանեմ խոջի տղին.
Խոջի տղեն դիս կտփա,
Ընձի կասա՝ սապոդ քաշա, ծտներս լվա։
Հազար ճանց խոջի տղի,
Մատաղ կանեմ իմ Սաքոյի,
Ձարխներին, չորրներին,
Ծակ քոլոզին, անծոա վզին,
Փեսե լիզվին, պապիլոզին։
Հեքուց, էլօր իմ Սաքոնը,
Նախիր տանա, նախիր բերա,
Հո, հո կանա,
Չո, չո կանա,
Խաց կրերա,
Ճիժ կպախա։
Աղճի, աղճի, սևավոր աղճի,
Արի քեզ տամ բոզրդյանի.
Բոզրդյանը քեզ կպահա,
Լավ-լավ շորեր քեզ կբերա։
Մարե, մարե, անուշ մարե,
Ես ի՞նչ կանեմ բոզրդյանին,
Բոզրդյանը դիս կտփա,
Գյաղը կառնի, գլխիս կաա։
Հազար ճանց բոզրդյանի
Մատաղ կանեմ իմ Սաքոյին։

Իմ Սաքոյի մուրքով էծեր,
Կարմիր կովեր,
Ջիշ կոտոշներ,
Փրզ-փրզ կթեմ,
Մածուն մերեմ,
Ձցում զանեմ,
Կարագ խանեմ,
Տանեմ ծախեմ։
Փարեն բերեմ,
Իմ Սաքոյին,
Չարոխ առնեմ,
Չորար գործեմ,
Քոլոզ նխշեմ,
Պույլոզ ճարեմ,
Քիշմիշ առնեմ,
Պնդուկ բերեմ,
Սաքոյիս պախեմ։

## 25. ԳՆԱՑԵՔ ՏԵՍԵՔ

Գնացեք տեսեք, ո՞րն ա մտել բոստան,
Գնացին տեսան, էծն ա մտե բոստան։
   Էծն ու բոստան,
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե իծին,
Գնացին տեսան, գելն ա կերե իծին։
   Գելն ու էծը
   Էծն ու բոստան,
Մեզ բարիկենդան, ձեզ բարի զատիկ,
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե գիլուն,
Գնացին տեսան, գնդակն ա կերե գիլուն։
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան,
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե գնդակ,
Գնացին տեսան, հրացանն ա կերե գնդակ։
   Հրացանն ու գնդակ,
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան։
Մեզ բարիկենդան, ձեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե հրացան,
Գնացին տեսան ժանգն ա կերե հրացան։
   Ժանգն ու հրացան,
   Հրացանն ու գնդակ,
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան։
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե ժանգը,
Գնացին տեսան, յուղն ա կերե ժանգը։
   Յուղն ու ժանգը,
   Ժանգն ու հրացան,
   Հրացանն ու գնդակ,
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան,
Մեզ բարիկենդան, ձեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե յուղը։
Գնացին տեսան, մուկն ա կերե յուղը։
   Մուկն ու յուղը,
   Յուղն ու ժանգը,
   Ժանգն ու հրացան,
   Հրացանն ու գնդակ,
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան,
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե մուկը,
Գնացին տեսան, կատուն ա կերե մկան։
   Կատուն ու մուկը,
   Մուկն ու յուղը,
   Յուղն ու ժանգը,
   Ժանգն ու հրացան,
   Հրացանն ու գնդակ,
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան,
Մեզ բարիկենդան, ձեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա կերե կատվին,
Գնացին տեսան, շունն ա կերե կատվին։
   Շունն ու կատուն,
   Կատուն ու մուկը,
   Մուկն ու յուղի,
   Յուղն ու ժանգը,
   Ժանգն ու հրացան,
   Հրացանն ու գնդակ,
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան,
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։
Գնացեք տեսեք, ո՞րն ա տարե. շանը,
Գնացին տեսան, հարսն ա տարե շանը։
   Հարսն ու շունը,
   Շունն ու կատուն,
   Կատուն ու մուկը,
   Մուկն ու յուղը,
   Յուղն ու ժանգը,
   Ժանգն ու հրացան,
   Հրացանն ու գնդակ,
   Գնդակն ու գելը,
   Գելն ու էծը,
   Էծն ու բոստան,
Մեզ բարիկենդան, ձեզ բարի զատիկ։

Գնացեք տեսեք, ո՞րն ա տարե հարսին,
Գնացին տեսան, փեսեն ա տարե հարսին։
Փեսեն ու հարսը,
Հարսն ու շունը,
Շունն ու կատուն,
Կատուն ու մուկը,
Մուկն ու յուղը,
Յուղն ու ժանգը,
Ժանգն ու հրացան,
Հրացանն ու գնդակ,
Գնդակն ու դելը,
Դելն ու էծը,
Էծն ու բոստան,
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ՝
Գնացեք տեսեք, ո՞րն ա պսակե փեսին,
Գնացին տեսան, տերտերն ա պսակե փեսին։
Տերտերն ու փեսեն,
Փեսեն ու հարսը,
Հարսն ու շունը,
Շունն ու կատուն,
Կատուն ու մուկը,
Մուկն ու յուղը,
Յուղն ու ժանգը,
Ժանգն ու հրացան,
Հրացանն ու գնգակ,
Գնդակն ու դելը,
Դելն ու էծը,
Էծն ու բոստան,
Մեզ բարիկենդան, ձեզ բարի զատիկ,
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ,
Հարսին ու փեսին ուրախ հարսանիք։

## 26. ԴՈՒԴՈՒԼՆ ԷԿԱՎ ՄԵՐ ԴՈՒՌԸ

Դուդուլն էկավ մեր տունը
Դուդուլն էկավ մեր տունը,
Բոնինք կապինք շան սունը,
Բոնինք կապինք շան սունը։
Ա՜խ, դու Դուդուլ, ջան Դուդուլ,
Վա՜խ, դու Դուդուլ, ջան Դուդուլ։
Բալկոնի վրի ղուշը,
Բալկոնի վրի ղուշը,
Պաքնեմ Դուդուլի թուշը,
Պաքնեմ Դուդուլի թուշը։
Ա՜խ, դու Դուդուլ, ջան Դուդուլ,
Վա՜խ, դու Դուդուլ, ջան Դուդուլ,
Սարեն էկավ ձիավոր,
Սարեն էկավ ձիավոր,
Ճերմակութլանն եմ սավոր,
Ճերմակութլանն եմ սավոր։
Ա՜խ, դու Դուդուլ, ջան Դուդուլ։
Վա՜խ, դու Դուդուլ, ջան Դուդուլ։

## 27. ՀԱՐԻՐ ՀԻՍՈՒՆ...

Հարիր ծխում տան ոես եմ,
Թութուն չունեմ, սևերես եմ,
Թութուն լիներ մարդ մ՚էլ ես եմ,
Էրվա, վառվա ես անթութուն։
Թութուն, թութուն, դու շատ լավն ես,
Եփ կքաշեմ, սիրտ կխառնես,
Թութուն, ընձի հաց ու ջուր ես,
Էրվա, վառվա ես անթութուն։
Թութուն հելավ պաչկա-պաչկա,
Կոտրած սելս դառավ կաչկա,
Թութուն չունեմ, ինչ զուլում ա,
Էրվա, վառվա ես անթութուն։
Վերի դեմին ցանի գալի,
Կարկուտ կգա, էն կտանի,
Ղույլասարի գին չի հանի,
Էրվա, վառվա ես անթութուն։

## 28. ՍԱՐ, ՍԱՐ

Սար, սար,
Ես սարերի ծաղիկն եմ,
Ջա՜ն, ջա՜ն,
Ես Լևոնի քույրիկն եմ։
Սար, սար,
Ժամի դռնեն դուս եկա,
Ջա՜ն, ջա՜ն,
Արևի պես լուս ելավ։
Սար, սար,
Էն սարին սար չեմ ասի,
Ջա՜ն, ջա՜ն,
Վաա դյադին յար չեմ ասի։

## 29. ՈԼՈՐ ՄՈԼՈՐ ԱՄՊՆ Է ԳԱԼԻՍ

Ոլոր մոլոր ամպն է գալիս,
Կովկաս սարիցը,
Մեկ փեչաաած դիր սաացա,
Ես իմ յարիցը։
Գիր գրողը լավ չէր գրել,
Ղալամի ծերիցը,
Ախ, ոնց անեմ, որ ազաավեմ,
Ես էս ցավիցը։

## 30. ԳՅՈՒԼԻ ՋԱՆ, ՖԱՅՏՈՆ ԶԱՆԻՏ ԿԱՆԵՄ

Գյուլի ջան, ֆայտոն զանիա կանեմ,
Գյուլի ջան, ֆայտոն զանիա կանեմ,
Ջան, յարո ջան, քեզի մեր տուն տանեմ։
Յանա-յանա, էս էլ բախտի բան ա։

Ալ բլուզիտ մեռնեմ, շալ բլուզիա մեռնեմ,
Մադիսկի կարած բլուզիտ մեռնեմ*։

* Կրկնել յուրաքանչյուր քառատողից հետո

*Գյուղի ջան, շատ մի ցանի բամբակ,*
*Կերթամ սուգը, վրետ կանեմ գանգատ,*
*Հայաջքներիտ մատաղ, նայվածքներիտ*
*մատաղ,*
*Ղալամով քաշած ունքերիտ ես մատաղ։*

## 31. ՔԱՄԻՆ ՀԵԼԱՎ ԷՐԱՆ-ԷՐԱՆ

*Քամին հելավ էրան-էրան,*
*Վա՜յ լե, լե, լե, լե, լե,*
*Յարս մնաց Թուրքի բերան,*
*Վա՜յ լո, լո, լո, լո, լո։*
*Գյամին եկավ, յարիս տարավ,*
*Վա՜յ լե, լե, լե, լե, լե,*
*Հասեք տղեքք, յարիս բեբեք,*
*Վա՜յ լո, լո, լո, լո, լո։*

## 32. ԱԽՊԵՐ ՋԱՆ

*Ախպեր, անադիտ մեռնեմ,*
*Ջեբիդ դանակին մեռնեմ,*
*Ախպեր, անադիտ մեռնեմ,*
*Ջեբիդ կանակին մեռնեմ։*
*Ախպեր ջան, քեզ խուրբան,*
*Մեր գյումանը, դու ես, դու։*
*Ալ ու ալվան ես հագել,*
*Կարմիր լալա ես դառել,*
*Ալ ու ալվան ես հագել,*
*Կարմիր լալա ես դառել։*
*Ախպեր ջան, քեզ խուրբան,*
*Մեր գյումանը, դու ես, դու։*

## 33. ԵՍ ՄԻ ԹԱՔ ՏՂԱ ԵՄ

*Ես մի թաք տղա եմ,*
*Աստծուն ծառա,*
*Ես մի թաք տղա եմ,*
*Օ՜յ, օ՜յ, մայրիկ ջան,*
*Օ՜յ, օ՜յ, քույրիկ ջան, օ՜յ։*
*Կանցիլարի դուռը,*
*Վառվում էր փուռը,*
*Կանցիլարի դուռը,*
*Օ՜յ, օ՜յ, մայրիկ ջան,*
*Օ՜յ, օ՜յ, քույրիկ ջան, օ՜յ։*
*Կանչին, սարան սալդաթ,*
*Քցին, «բիբորի»։*
*Կանչին, սարան սալդաթ,*
*Օ՜յ, օ՜յ, մայրիկ ջան,*
*Օ՜յ, օ՜յ, քույրիկ ջան, օ՜յ։*
*«Բիբորը» խանեցի,*
*Սալդաթ ղնացի,*
*«Բիբորը» խանեցի,*
*Օ՜յ, օ՜յ, մայրիկ ջան,*
*Օ՜յ, օ՜յ, քույրիկ ջան, օ՜յ։*

## 34. ՎԻՐԻ ԶԱՂԵՆ ԱՐՏ ՈՒՆԵՄ

*Վիրի զաղեն արտ ունեմ,*
*Շատ մարդ գիդի դարդ չունեմ,*
*Վա՜յ, գիդի, դու գիդի, իմ յարն ես,*
*Սոնա յարո ջան, սալդաթ եմ։*
*Կանաչել են արտերը,*
*Ծաղկել են դարդերը,*
*Վա՜յ, գիդի, դու գիդի, իմ յարն ես,*
*Սոնա յարո ջան, սալդաթ եմ։*
*Գարունն եկավ դաշտումը,*
*Աչքս մնաց ճամփումըդ,*
*Յար գիդի, դու գիդի, իմ յարն ես,*
*Սոնա յարո ջան, սալդաթ եմ։*

## 35. ԳՆԱԼՈՎ, ԳՆԱԼՈՎ...

*Գնալով, գնալով հասանք Դիլիջան,*
*Հասանք Դիլիջան,*
*Մայրիկս ձեն ավեց՝ զինվոր բալա ջան։*
*Զինվոր բալա ջան։*
*Քարափի տակիցը ծաղեց արեը,*
*ծաղեց արեը,*
*Կռունկի թևի հետ ղրկիր բարեը,*
*ղրկիր բարեը։*

## 36. ԱՆՏԵՐ ՄՆԱՐ ՀԱՍԱՆԿԱԼԵՆ

*Անտեր մնար Հասանկալեն,*
*Սասկեր էնվեր փաշի բալեն,*
*Ախ, յարս մնաց տանը լալեն,*
*Հասիր նամակ, վիրավոր եմ*։*
*Հասանկալեն քար ու քոա,*
*Գյուղեն մեջը կֆռֆռա,*
*Ախ, գյուղի յարեն կմռմռա,*
*Վերան մնաս, Հասանկալա։*
*Հասանկալի դռներ բացին,*
*Կամանդերն էր գնդմանացի,*
*Ախ, հայ աղերքին սրի քաշին,*
*Պատմիր նամակ, վիրավոր եմ։*
*Հասանկալեն բարձր տեղ ա,*
*Ջուրն հիվանդի դեղ ա,*
*Հայ զինվորի տեղ նեղ ա,*
*Հասիր նամակ, վիրավոր եմ։*

## 37. ԵՎՐՈՊԱ ԱՇԽԱՐՀԻ...

*Եվրոպա աշխարհի անմեղ արյունը,*
*անմեղ արյունը,*
*Կարմիր գույնով ներկեց գետերի ջուրը,*
*գետերի ջուրը։*
*Յար, դու յար չելար, կրակ ցավ էլար,*
*Էլման քո յարն եմ, եա դամ քեզ կառնեմ։*

---

* *Յուրաքանչյուր տան վերջին երկու տողը կրկնել։*

Մուղդու սալդաթ եմ, սադաղս նեղ ա,
սադաղս նեղ ա,
Ման եկած գեղերը անծանոթ տեղ ա,
անծանոթ տեղ ա,
Յար, դու յար չեյար, կրակ ցավ էյար,
Դարձյալ քո յարն եմ, կարմիր բլեթ եմ։

### 38. ԵՐԵՎԱՆԻՑ ՎԱԶԵՎԱԶ...

Երեվանից վազեվազ,
Ջա՜ն գյուլում, ջա՜ն, ջա՜ն,
Խատիսյանը քյանդիրբազ,
Ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։
Ջահել աղջիկ, ոսկու հարս,
Ջա՜ն գյուլում, ջա՜ն, ջա՜ն,
Սրբազանի միտքը թալա,
Ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։
Հե՜յ ջան աղբեր, իմացեք,
Ջա՜ն գյուլում, ջա՜ն, ջա՜ն,
Թուրքն է գալիս, դիմացեք,
Ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։
Արփաչայը անց կացավ,
Ջա՜ն գյուլում, ջա՜ն, ջա՜ն,
Սարդարապատում ջարթվեցավ,
Ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։
Խատիսյանը ղուրս թռավ,
Ջա՜ն գյուլում, ջա՜ն, ջա՜ն,
Բոլշեվիկը տիրացավ,
Ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։

### 39. ՊԼԻՄՈՏՆԵՐ ԿԱՊԻՆ...

Պլիմոտներ կապին Քյավառա վրեն,
Սուսան յար ջան, Քյավառա վրեն,
Ձին քաշա տալդեն, անուշ յար ջան,
Գյուլալի ղարղեն։
Բոլշեվիկներն եկան Նյենովկա յանեն,
Սուսան յար ջան, Նլենովկա յանեն.
Էլման քո յարն եմ, անուշ յար ջան,
Նու ղանոտմ կառնեմ։
Թոփերը ղանեցին Քյավառա քոից,
Սուսան յար ջան, Քյավառա քոից,
Նժդեհն ասավ Լաղգուն. «Ո՞ր յանով փախնենք,
Սուսան յար ջան, ո՞ր յանով փախնենք»։
Լաղգի Հայկոն ասավ. «Պարոն գեդուկով
փախնենք,
Սուսան յար ջան, գեդուկով փախնենք»,
Էլման քո յարն եմ, Սուսան յար ջան,
Սաղ մնամ, կառնեմ։

### 40. ԼՈՅ, ԼՈՅ, ԼՈՅ, ԼՈՅ...

Լոյ, լոյ, լոյ, լոյ,
Սալի վրի գինին,
Լոյ, լոյ, լոյ, լոյ,
Կեցցե մեր ընկեր Լենին։
Լոյ, լոյ, լոյ, լոյ,
Սարեն կուգա ձիավոր,
Լոյ, լոյ, լոյ, լոյ,
Բարև բերավ Լենինեն։

### 41. ՄԱՅՐԻԿԻՆ...

Մայրիկի՞ն, մայրիկին շլյապա բերեք,
Քույրիկին պերո,
Հայրիկին, վա՜յ հայրիկին,
Փոստե փափախ, դադաթ չունենա,
Աստառ չունենա, խեղճ ու կրակ ա։
Մայրիկի՞ն, մայրիկին շուբա բերեք,
Քույրիկին վերարկու,
Հայրիկին, վա՜յ հայրիկին,
Զուխտ տվեք, թևեր չունենա,
Փեշեր չունենա, խեղճ ու կրակ ա։
Մայրիկի՞ն, մայրիկին մեսաքս բերեք,
Քույրիկին բարխաա,
Հայրիկին, վա՜յ հայրիկին,
Շալե շապիկ, օձիք չունենա,
Կոճակ չունենա, խեղճ ու կրակ ա։
Մայրիկի՞ն, մայրիկին կոշիկ բերեք,
Քույրիկին կալոշ,
Հայրիկին, վա՜յ հայրիկին,
Տրեխ տվեք, տակեր չունենա,
Կապեր չունենա, խեղճ ու կրակ ա։
Մայրիկի՞ն, մայրիկին ֆայտոն բերեք,
Քույրիկին կառեթ,
Հայրիկին, վա՜յ հայրիկին,
Կաշկա լինի, թաքառ չունենա,
Ակներ չունենա, խեղճ ու կրակ ա։
Մայրիկի՞ն, մայրիկին փլավ բերեք,
Քույրիկին իշխան ձուկ,
Հայրիկին, վա՜յ հայրիկին,
Ոսպե վոիկ, հատեր չունենա,
Յուղ էլ չունենա, խեղճ ու կրակ ա։
Մայրիկի՞ն, մայրիկին կակաո բերեք,
Քույրիկին կոֆե,
Հայրիկին, վա՜յ հայրիկին,
Տաք ջուր տվեք, շաքար չունենա,
Գույն էլ չունենա, խեղճ ու կրակ ա։

### 42. Ա՜Խ, ԷՐՆԵԿ ԷՆ ՕՐԸ

Ախ էրնեկ էն օրը,
Որ կգան մեր դուռը ափելու, ափելու, ափելու,
Խերս կխարցնա. էն ո՞րն ա, էն ո՞րն ա, էն
ո՞րն ա։
Էնի ընդուց կասա, աղճիկ ուղողն ա, ուղողն ա,
ուղողն ա։

Ախ, էրնեկ էն վախար,

Որ իմ խեր կլինի, դուռ բանալու, բանալու,
բանալու,
Մերս ընձի կտաս․ հելի կորի, չտեննան, չտեննան,
չաեննան,
Ես կփախնեմ փտողի տակ, փառղի տակ, փառղի
տակ։

Ախ էրնեկ էն օր,
Խերս կխտրցնտ․ խնամի, հ՞նչ ե՞ս էկե, հ՞նչ ե՞ս
էկե, հ՞նչ ես էկե,
Խնամին էլ կասա, էկել եմ ախճիկ ուզելու,
ուզելու, ուզելու,
Խերս կասա, ախճիկ չունեմ մարթի տալու, տալու,
տալու։

Ախ, էրնեկ էն օրը,
Որ Նաղարեն կզանեն, ղուռնեն կփչեն, կփչեն,
կփչեն,
Դուռ ու դրկից կգան թամաշա անելու, անելու,
անելու,
Ընդոնք իրար կասեն. էրնեկ էս էթողին, էթողին,
էթողին։

Ախ, էրնեկ էն վախտը,
Որ մեր ձեռը ձեռի ավուկ տանեն ժամ, տանեն
ժամ, տանեն ժամ,
Տերտեր մեզի սլսակա հիրար խեա, հիրար խեա,
հիրար խեա,
«Տանում են ազե ջան» փչելով տանեն կերսանց
տուն, կերսանց տուն, կերսանց տուն։

Ախ, էրնեկ էն օրը,
Որ մեր չլեր կքցեն, կքցեն, կքցեն,
Ընձի կտսեն, հելի գնա, քնելու, քնելու, քնելու,
Մարթըս էլ կգա ընձի կ'ուրբան հլնելու, հլնելու,
հլնելու։

## 43. ԵՆՈՔՆԵՐԻ ՎՐԵՆ ԿԱՊՈՒԿ ԽԱՂԸ

Խնթրեմ լսեք, մե խաղ ասեմ,
Մեր քաղաքի Ենոքներին գովամ,
Տա. նանայ, հայ, հայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Հա նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ*։

Լավ ողնաման փինող Ասմարի Ենոք,
Էրինչ փչացնող, ջառմեն քաշող Ասոյի Ենոք,
Տարին ասվերկու ամիս արաններր ման եկող,
անոթի, ծարավ տուն դարցող Ասլկի Ենոք։

Ամառ, ձմեռ թոռից վնաս արող Ասոնի Ենոք,
Արաղի կուճոն խմող Ադամի Ենոք,
Խեղճ ու կրակ Աղեկի կապուտ Ենոք։

Շայի հաշվին արաղ խմող Արևշատի Ենոք,
Օրը ցերեկով արևին քոռ հիշկող Բաբասու Ենոք,
Պաափ տղներ ու ծակեր շ... Բեգոյի Ենոք։

Կուլկի մսից քիֆթա ուտող Բդոյի Ենոք,
Ք... վրեն խանչալ քաշող Բլբուլի Ենոք,
Ծտկի թուլա Բոշի Ենոք։

Թաղտ ֆորմի ակ շինավաթ տնող Բադալի Ենոք.
Ախկատ-խալարտ Գափոյի Ենոք,
Ընղաղով բասմի տարթ կգրող Գզիր-Դավոյի Ենոք։

Կ՚որկի ալրից բոքոն թխող Դավթի-Վարթենի Ենոք
Նավտուկ դավա, հինքն էլ չափուռ Թոռչու Ենոք,
Ջայրի սինոռ հսնող, խոռոմի դող Ժամխրի Ենոք,

Մե դրվանքա կույլասար քաշող Կարմիր Ենոք,
Իշի քիֆթա ծախող Կոլոյի Ենոք,
Ասպոքների կրնգների վրեն ման գալող Կոլոտ–
Հարթենի Ենոք։

Խլղին խափող, շան կ'այդի օռնող, յտ էլ խաշող
Ոսկի Ենոք,
Սելի լավ տայաղ Հայթի Ենոք,
Քարից ամրոց դնող, հետո ծախող Հովեյի Ենոք,

Կիսատ-պռատ նավթ չափող Մինասի Ենոք,
Կ'այիմ պաս շարող Մհերի Ենոք,
Դառը կուա Նավոյի Ենոք,

Դարմղադյաղի խաղողի մչի դեղին ճտնօ Շանու
Ենոք,
Կտավի խուրց Շլսի Ենոք,
Կ'աշանդ չարուխ խաքնող Պիղոյի Ենոք,

Լավ կնիկ կ'լավցնող Սողոմոնի Ենոք,
Ջորս կանթանի կճուճ Տեր-Օհանի Ենոք,
Կ'աշանդ րեռ վերցող Քյալբաչարի Ենոք,

Սբասի ծուռ Քոչոյի Ենոք,
Բեա-րեա խուրց կապող Քուրթ-Գևորքի Ենոք...

## 44. ԽԱՉԱՏՈՒՐՆԵՐԻ ՎՐԵՆ ԿԱՊՈՒԿ ԽԱՂԸ

Խնթրեմ լսեցեք, մի խաղ էլ ասեմ,
Մ՞եր քաղկի Խաչատուրներին ճտնչցեք։
Տա նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Հայ, նանայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ*։

Գրոա-դրոա Բինաթի Խաչատուր,
Փսոնից փախնող Թորյի Խաչատուր,
Գլոխ գովող Հերեվանցոնց Խաչատուր։

---

* Կրկնել ամեն եռատողից հետո

* Կրկնել ամեն եռատողից հետո

Ուտող-խմող Բաղալի խաչատուր,
Փնթի խմող Ջաքոյենց խաչատուր,
Դիք-դիք քելող Ատոնենց խաչատուր:

Ցանից կոմունիստ Ավոյենց խաչատուր,
Նիկոլի դախխա գեղերտիր Յուզբաշենց խաչատուր,
Կեխոտոտ-լորձ Մայրապետենց խաչատուր:

Կես փաշայլյոն, կես կլուշնիկ Ինկվաթենց
խաչատուր,
Քյասիբների դախուր Թամկենց խաչատուր,
Ռանց բրոնքի խաց ուտող Մլսկենց խաչատուր:

Լավ ոժրար Բոսենց խաչատուր,
Արթարամիտ ու միամիտ Սավզոնց խաչատուր,
Կոսար սերդեր Կոլոնենց խաչատուր:

Դալաք-խաշո Ադամզաենց խաչատուր,
Զունի ղամբյաշ Խոսրովի խաչատուր,
Պշկուկ Հառաքել Բաղեենց խաչատուր:

Թաղա գունաշի Կ'ազենց խաչատուր,
Հերենա կանթարին ձուկ խասցնող Ջոնեյսի
խաչատուր,
Խելքի կարոտ վարժապետ Սարուխանի խաչատուր:

Կարմրաժեռ էն մեկել Սարուխանի խաչատուր,
Փոշալ հիչարով մերցող Կարաբալյացոնց
խաչատուր,
Խմուկ վախալ խաչի վրեն նստող Սեփոյի
խաչատուր:

# ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ

## 1. ՁՅՈՒՄ

Ձյում կարաք,
Գնա հարի,
Ձյում կարաք,
Կարաք խանի։

Ձյում կարաք,
Թանր քեղի,
Ձյում կարաք,
Կարաքն ընձի։

## 2. ԱՍԵՂ ԹԵԼԵԼ

Պրտա մտու,
Պրտա մտու,
Որ չմղնի,
Կոծա մտու։

## 3. ՄԵ ՄԱՏՍ

Մե մատս,
Էրկու մատս,
Իրեք,
Ընգու վրեն ղնենք
Ջորս մատս,
Խինդ.

## 4. ՏՂԱՆԵՐԻՆ

Տղա-տղա,
Ոսկե ջղմ,
Առ քո ճտներ,
Գնա խաղա,
Ալուր մաղեմ,
Գաթա շաղեմ,
Գամ քե պտխեմ։

## 5. ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

Ախճիկ, ախճիկ,
Քարե չղճիկ,
Առ քո աիգներ,
Գնա խաղա,
Ալուր մաղեմ,
Գաթեն շաղեմ,
Գամ քե թաղեմ։

## 6. ՄԵԾ ՊԱՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԸ

Քոռ էրկու շաբթի,
Պտս˙ երեքշաբթի,
Ջիք՝ չորեքշաբթի,
Ավլագ հինգշաբթի,
Հուրթի ուրփաթ օր,
Ջասկի շաբաթ օր,
Սուրբ հաղորթման օր,
Քիֆթի կիրակի։

## 7. ԽՐԱՏ ՃԺԵՐԻՆ

Խացը շատ արա,
Պանիրը քիչ արա,
Մանդր ծտմա,
Տես ի՞նչ խտմ տ։

## 8. ՄՅԱՈ՛Ւ-ՄՅԱՈ՛Ւ

— Մյաո՛ւ-մյաո՛ւ,
— Վի՞ր կատուն ես։
— Աղաբեկի։